№ 94 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 20 1888 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 20 № 94

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աշակերտների ուղեղի յոդնածութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թէօդոսիայից. Նամակ Ղուբայից. Նամակ Ախալցխայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վիլհելմ կայսրի ճառը. Տեղեկութիւններ Թուրքիայից և Թուրքաց Հայաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տեղեկագիր Շուշու կալուածական խնդրի և հոգաբարձութեան 27-ամեայ գործունէութեան.

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՂԵՂԻ ՅՈՂՆԱԾՈՒԹԻՒՆԸ

Աշակերտների ուղեղի յոդնածութեան հարցը զբաղեցնում է այժմ ամբողջ Եւրոպան։

Հին, յունական քաղաքակրթութեան ներկայացուցիչները ասում էին, որ առողջ մարմնի մէջ՝ հոգին առողջ է,—in corpore sano mens sana. Բայց այդ հին ակսիոման այժմ նորագոյն հետազօտութիւնների և դիտողութիւնների հիման վրա, պէտք է հակառակ ձևով ընդունվի, այն է՝ mens insana, corpus insanum, այսինքն եթէ հոգին առողջ չէ, մարմինն էլ առողջ չի լինի։

Եւ ճշմարիտ, եթէ մարդու, մանաւանդ երեխայի, պատանու, երիտասարդի ուղեղը, հոգին առողջ չը պահվի,—նրա մարմինն էլ հիւանդոտ կը լինի, կանոնաւոր կերպով չի սնվի, հետզհետէ կը թուլանայ, կը քայքայվի։

Դեռ 1829 թուին Գերմանիայի ուսումնականները ուշադրութիւն դարձրին և մատնացոյց արեցին աշակերտների ուղեղի յոդնածութեան վրա։ Դեռ 1836 թուին դօկտոր Լօրէնցէր մի նշանաւոր աշխատութիւն հրատարակեց „Zum Schutze der Gesundheit in den Schulen“ վերնագրով։ Այնուհետև 1869 թուին յայտնի ուսումնական Վիրխով ներկայացրեց ազգային լուսաւորութեան մինիստրութեանը մի զեկուցում դպրոցական հիւանդութիւնների մասին։ Վերջապէս դօկտոր Ֆինկելբուրգ, 1877 թուին, Նիւրընբերգ քաղաքում եղած գերմանական առողջապահական ժողովի ժամանակ աշակերտների ուղեղի յոդնածութեան մասին մի նշանաւոր զեկուցում ներկայացրեց, որը ոչ թէ միայն Գերմանիայի, բայց և ամբողջ Եւրոպայի ուշադրութիւնը իր վրա դարձրեց։

Եւրոպայի միւս երկիրները, մանաւանդ Ֆրանսիան և Անգլիան սկսեցին վերջին ժամանակները նոյնպիսի ուշադրութիւն դարձնել դպրոցական առողջապահութեան և աշակերտների յոդնածութեան նշանաւոր հարցի վրա։ Այդ հարցը դարձել է այժմ թէ արևելեան Եւրոպայում և թէ Ռուսաստանում հերթական հարց։

Երեք կէտ կայ, որոնց վրա գլխաւորապէս ուշադրութիւն են դարձնում այժմեան դպրոցական կազմակերպութեան դէմ բողոքող ուսումնականները։

1) Աշակերտները անչափ շատ ժամեր են պարապում թէ դպրոցում և թէ տանը, դասերը պատրաստելու ժամանակ։ Միջնակարգ դպրոցների բարձր դասատների աշակերտները Եւրոպայում, մանաւանդ Գերմանիայում պարապում են միջին թւով օրական 11 ժամ, ուրեմն օրվայ դրեթէ կէսը։ Դա շատ շատ է։ Աշակերտը իսկապէս օրական 8 ժամից աւելի չը պէտք է պարապի, որպէս զի առողջ լինի։

2) Աշակերտներին այժմեան միջնակարգ դպրոցներում աւելի մատակարարվում են վերացական գիտութիւններ, քան թէ պատանիներին մատչելի դրական հմտութիւններ։ Իր հայրենի երկիրը, իր քաղաքը չուսումնասիրած, աշակերտը անգիր է սովորում երբէք չը տեսած հեռու երկիրների, օրինակ Ամերիկայի գետերի, ծովակների կամ սարերի անունները։ Աշակերտները իրանց մայրենի աշխարհաբար, խօսեցած լեզուն հիմնաւորապէս դեռ չուսումնասիրած՝ անգիր են անում հին, դասական, զրաբար լեզուների ձևերը, որոնք մեռած և գործածութիւնից դուրս եկած լինելով ներկայացնում են աշակերտի ուղեղի համար վերացական հմտութիւններ։

3) Դպրոցը միակերպ և հաւասար կերպով է վերաբերվում դէպի շատ ընդունակ և դէպի միջակ ընդունակութիւնների տէր պատանիները։ Այդպիսով ընդունակները կանոնաւոր կերպով առաջ են գնում, իսկ միջակ ընդունակութիւնների տէր պատանիները չեն կարողանում հասնել ընդունակներին իրանց ուսման ընթացքի մէջ, նրանց ուղեղը յոդնում է իրանց ոյժից վեր արած ջանքերից, նրանք ընկճվում են ուսման բեռի ծանրութեան տակ, հիւանդանում, այլանդակվում են, նրանց մարմինը, ուղեղի անբնական զարգացման ներգործութեան տակ քայքայվում է։ Եւ ահա այդպիսիները, եթէ իսպառ չեն կորչում ուսման ժամանակ, կիսատ թողնում են ուսումը, դուրս են գալիս ուսումնարանից, անպէտք դառնալով կեանքի համար, իսկ շատ անգամ լցնում են հասարակական այժմեան կարգերով այլ և այլ դժգոհների շարքերը։

Ահա այդ գլխաւոր երեք կէտերն են, որոնք այժմ Եւրոպայում ուսումնասիրութեան առարկայ են դարձել թէ հիգիէնիստների, թէ մանկավարժների և թէ պետական մարդկանց, որոնց համար թանգ է դպրոցը իր աշակերտներով, որոնց համար թանգ է մարդկային ապագայ սերունդի, հայրենիքի ապագայ քաղաքացիների առողջ, բնական, կանոնաւոր և նպատակայարմար մտաւոր և ֆիզիկական զարգացումը։

Այդ երեք կէտերին պէտք է աւելացնել և մի չորրորդ կէտ. երկու սեռի պատանիների մտաւոր ուսումը պէտք է հաւասարակշռվի և ֆիզիկական զարգացմամբ, կանոնաւոր մարմնամարզութեամբ, մարմնի բոլոր օրգանների կանոնաւոր վարժութեամբ, այն ինչ այժմ մեծ մասամբ ուղեղը զարգանում էր ի վնաս մարմնի, կազմուածքի զարգացման։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԷՕԴՈՍԻԱՅԻՑ

Օգոստոսի 7-ին

Քաղաքիս ազգայիններէն ոմանք արդէն յայտնած էին լրագրութեան միջոցով իրանց մանաւոր ուրախութիւնը տեղիս քանի մի ազգային և եկեղեցական ուրախալի դէպքերի և երևոյթների մասին, եռանդուն գործակցութեամբ և ազդու միջոցներով արդէն ծանօթ մեր ծայր. վարդապետին Ստեփանէի։ Ուրեմն այն եղածների մասին կրկնութիւնը աւելորդ համարելով, կասենք որ ուրիշ շատ ազգօգուտ գործեր ևս տեսնում է այստեղ Խորէն վարդապետը և արդէն սկսել է նրանց աջողեցնելու միջոցներին ևս ձեռնարկել բուռն եռանդով։

Հայր Խորէն տեսնելով քաղաքիս կենտրոնում Ս. Սարգիս եկեղեցու կիսակործան և ողբալի դրութիւնը, զգածվեցաւ որդիական ցաւակցութեամբ, մանաւանդ գնահատելով նախկին չէնքի բազմադարեան հնութիւնը (աւանդութեամբ և հնախոյզների հաւաքած տեղեկութիւններով տասներորդ դարի շինուածք կը համարվի)։ Այդ եկեղեցու վերջին յաւելեալ մասերը, որոնք մի քանի անգամ ևս վերանորոգութեան ենթարկված էին, ինչպէս յիշատակարանը կը ցուցանէ՝ վերջին վերանորոգութիւնը 356 տարի առաջ է եղած, նոյն յաւելեալ մասերը դարձեալ քանդվելով, թողվել էին բոլորովին անխնամ դրեթէ քառասուն տարի և արդէն իսպառ կորստեան մատնվելու վիճակին էին հասել, երբ յանկարծ Խորէն Ստեփանէ հայրիկը մեր մէջ յայտնվեցաւ և ուրիշ մասնաւոր կարօտութիւններից յետոյ, ուշադրութիւն դարձրեց սոյն եկեղեցու վրա։ Նա սկսեց ազդու քարոզներով խրախուսել Թէօդոսիայի հասարակութիւնը և վառել սրտները. իսկ ինքն հաստատամտութեամբ ձեռք դարկեց վերանորոգութեան գործին։ Նախ՝ ընտրեց չինութեան գործերը հասկացող գործունեայ հինգ հոգաբարձուներ, ապա ամբողջ վերանորոգութեան գործը ամենայն հարկաւոր պէտքերով ու նիւթերէն էր ամենքից։ Այսպէս շարունակվում էր մինչև 1860 թիւը։ Ճշմարիտ է, վանահայրերը, որոնք կառավարում էին այդ կալուածները, շատ քիչ եկամուտ էին ցոյց տալիս, և չէ կարելի ուրանալ, որ արդիւնքների մի մասն ևս յափշտակում էին, բայց դոնէ հողը, կալուածը ոչ մի դրկանք չէր կրում, չէր դառնում օտարի սեփականութիւն. յափշտակվում էր միայն շարժական կալուածքը, իսկ անշարժը մնում էր միշտ վանքի սեպհականութիւն. դոնէ վանքերը, կրկնում ենք, չէն էին մնում, ամտեսութիւն ունէին, հոգևորապէս մխիթարում էին ժողովուրդը։

Բաղդասար միտրօպօլիտը չէր մոռացել և ուսումը։ Երբ 1838 թ. բացվում է Շուշու սեմինարիան, բայց արդիւնքի պակասութեան պատճառով 1844 թուի մարտի 1-ին փակվում է, նա ոչ մի հոգս և ջանք չէ խնայում վերաբացել։ Շրջաբերական կոնդակ է հրատարակում ժողովրդին ուղղված, համոզում է Շուշու արքունի գաւառական ուսումնարանի (уѣздное училище) վերատեսուչ հայազգի Մելքոն Խիտրովին ձրիաբար կատարել տեսչի և ռուս լեզուի դասատուի պաշտօն, տուրք է դնում թեմի հոգևորականութեան վրա, ասելով որ դպրոցը պէտք է կրթէ քահանաների որդիներին և այդպէս աջողեցնում է վերաբացել սեմինարիան 1845 թ. յուլիսի 17-ին։ Առաջին տեսուչը այդ դպրոցի լինում է Խիտրովը. տարեկան ծախս լինում է 159 ռուբլի, յետոյ հասնում է մինչև 300-ի։ Ուսանելի առարկաները լինում են կրօն, հայ, ռուս լեզուները, պարսկերէն լեզուն, թուաբանութիւն։ Այդ օրից սկսած դպրոցը շարունակվում է առաջնորդների հսկողութեան և հոգացողութեան տակ մինչև 1860 թ., ի հարկէ, ծախսն աւելանում է և այդ ծախսը վում է Լուսաւորչի թոռ Գրիգորիսի գերեզմանը, Խօթայ կամ Զարեքտարի վանքը, որ հնումն նոյնպէս հռչակաւոր վանք է եղել բազմահարուստ և բազմակալուած, ս. Յակոբայ վանքը, ս. Գէորգայ պոկի վանքը, Երից-Մանկանց վանքը, ս. Ղազարի վանքը և այլ ուրիշ սրբատեղիներ, ոսկեղենիներ ու մատուռներ։ 17 և 18-որդ դարերի խռովութիւնների և արշաւանքների ժամանակ, երբ մեր երկրում ամեն բան տակնուվրա էր եղել, կալուածների մի մասը յափշտակվել էր զանազան թուրք աղաներից, թէև վանքերի իրաւունքը այդ կալուածների վրա միշտ ճանաչվել է բռնակալ տիրապետողներից, Բաղդասար միտրօպօլիտը յաջողում է յափշտակածներն ևս ձեռք բերել, աշխատում է արդիւնաւոր կացուցանել այդ կալուածները, և իր մահից յետոյ, կալուածները իբրև վանքերի սեփականութիւն անցնում են Էջմիածնի հոգևոր իշխանութեան ձեռքը։ Երջանկայիշատակ Ներսէս V կաթողիկոսը իր հեռատեսութեամբ գնահատելով այդ կալուածների արժէքը ապագայի համար, աշխատում է հոգևոր իշխանութեան և վանքերի իրաւունքը այդ կալուածների վրա հաստատել տալ կառավարութիւնից. նրա խնդիրքով Վօրոնցով քննութիւն է նշանակում և 1855 թ. Պէտուխով երկրաչափը գծագրում է կալուածների մակարդակը. այդ պլանի համեմատ վանքերի սեփականութիւն ճանաչվում են հետևեալ տարածութիւնները.

1) Գանձասարի վանքը . . .	25,768	դէսեատին
2) Խօթայ վանքը.	196,438	»
3) Ս. Յակովբայ վանքը. . .	800	»
4) Պոկի ս. Գէորգի վանքը.	419	»
5) Երեք-Մանկունք.	25,000	»
6) Ս. Եղիշէի վանքը. . . .	2,590	»
7) Ս. Գրիգորիսի վանքը . .	600	»
8) Մանր ուխտատեղիներ. .	8,385	»
Բոլորը. . .	200,000	դէսեատին

հողը մշակած թէ անմշակ, անջրդի, սար, ապառաժ, անտառ, արօտատեղի, այգեստեղի և այլն։

Շուտով մեռնում են Ներսէս կաթողիկոսը և Բաղդասար միտրօպօլիտը և այլ ևս ոչոք հոգ չէ տանում պլանի հաստատութեան մասին. սակայն որովհետև բոլոր կալուածներն արդէն քննութեամբ ճանաչված են լինում իբրև սեփականութիւն վանքերի, ուստի Կովկասեան գլխաւոր կառավարութիւնը կամենում է հաստատել պլանը և այդ մասին, ինչպէս երևում է Ղարաբաղի կօնսիստորիայի գործերից, պահանջում են 300 ռուբլի, բայց տեղական հոգևոր իշխանութիւնը խնայում է տալ այդպիսի մի գործի համար 300 ռուբլու պէս մի չնչին գումարը և մերժում է, որով և պլանը մնում է անվաւեր։ Ապագայում, ի հարկէ, կամենում են դարմանել այդ անհաղթելի սխալը, բայց արդէն շատ ուշ է լինում.... Այնու ամենայնիւ կալուածները շարունակվում են մնալ հոգևոր իշխանութեան ձեռքում, որը կառավարում է նրանց վանքերի վանահայրերի և միաբանութեան միջոցով, և թէև այդ կալուածները մեծ արդիւնք չեն բերում հոգևոր իշխանութեան համար, բայց դոնէ այդ արդիւնքներով պահպանվում էին վանքերը, նրանց մէջ հաստատված էին միաբանութիւններ, նրանք ունէին ամտեսութիւն, երկրագործական գործիք, և վանահայրերի մօտ սովորում էին գիւղացի երեխայքը հոգևորական աստիճան ընդունելու համար։ Կալուածները այդ ժամանակ ըստ մեծի մասին անվէճ էին, վանքերի տիրապետութիւնը ճանաչվում

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Շուշու կալուածական խնդրի և հոգաբարձութեան 27-ամեայ գործունէութեան։

Յայտնի է, որ Պոլօժէնիա կոչված օրէնքը հայ եկեղեցու կառավարութեան համար հրատարակվեց 1836 թուին և այդ թուին բացվեցան կօնսիստորիաները։ Ղարաբաղի կամ Արցախի թեմը, որը առաջ պատկանում էր Աղուանից կաթողիկոսութեան, այդ ժամանակ հովվում էր Աղուանեան տան վերջին գահակալ Սարգսի եղբօրորդի Բաղդասար միտրօպօլիտի ձեռքով, որը թէ իբրև հոգևոր հովիւ. և թէ իբրև վերջին չառուիղ երկու տիրապետող իշխանական տների, այն է Աղուանից կաթողիկոսական և Հասան-Ջալալեան իշխանական տան, ահագին հռչակ և ժողովրդականութիւն էր վայելում ոչ միայն հայերի, այլ և օտար ազգերի մէջ։ Աղուանից կաթողիկոսութիւնը իր շրջանում պարփակում էր շատ հռչակաւոր և հոյակապ վանքեր, որոնք ունէին հարուստ կալուածներ և դոյք, կտակած զանազան իշխաններից և բարեպաշտ անձերից։ Այդ վանքերի մէջ գլխաւորն էր Գանձասարի վանքը, ուր գտնվում էր կաթողիկոսական գահը և համարվում էր Հասան-Ջալալեան կաթողիկոսական ցեղի սեփականութիւն իր գիւղերով հանդերձ։ Միւս վանքերն են—Ամարասի ս. Գրիգորիս, ուր գտնվում է Լուսաւորչի թոռ Գրիգորիսի գերեզմանը, Խօթայ կամ Զարեքտարի վանքը, որ հնումն նոյնպէս հռչակաւոր վանք է եղել բազմահարուստ և բազմակալուած, ս. Յակովբայ վանքը, ս. Գէորգայ պոկի վանքը, Երից-Մանկանց վանքը, ս. Ղազարի վանքը և այլ ուրիշ սրբատեղիներ, ոսկեղենիներ ու մատուռներ։ 17 և 18-որդ դարերի խռովութիւնների և արշաւանքների ժամանակ, երբ մեր երկրում ամեն բան տակնուվրա էր եղել, կալուածների մի մասը յափշտակվել էր զանազան թուրք աղաներից, թէև վանքերի իրաւունքը այդ կալուածների վրա միշտ ճանաչվել է բռնակալ տիրապետողներից, Բաղդասար միտրօպօլիտը յաջողում է յափշտակածներն ևս ձեռք բերել, աշխատում է արդիւնաւոր կացուցանել այդ կալուածները, և իր մահից յետոյ, կալուածները իբրև վանքերի սեփականութիւն անցնում են Էջմիածնի հոգևոր իշխանութեան ձեռքը։ Երջանկայիշատակ Ներսէս V կաթողիկոսը իր հեռատեսութեամբ գնահատելով այդ կալուածների արժէքը ապագայի համար, աշխատում է հոգևոր իշխանութեան և վանքերի իրաւունքը այդ կալուածների վրա հաստատել տալ կառավարութիւնից. նրա խնդիրքով Վօրոնցով քննութիւն է նշանակում և 1855 թ. Պէտուխով երկրաչափը գծագրում է կալուածների մակարդակը. այդ պլանի համեմատ վանքերի սեփականութիւն ճանաչվում են հետևեալ տարածութիւնները.

1) Գանձասարի վանքը . . .	25,768	դէսեատին
2) Խօթայ վանքը.	196,438	»
3) Ս. Յակովբայ վանքը. . .	800	»
4) Պոկի ս. Գէորգի վանքը.	419	»
5) Երեք-Մանկունք.	25,000	»
6) Ս. Եղիշէի վանքը. . . .	2,590	»
7) Ս. Գրիգորիսի վանքը . .	600	»
8) Մանր ուխտատեղիներ. .	8,385	»
Բոլորը. . .	200,000	դէսեատին

հողը մշակած թէ անմշակ, անջրդի, սար, ապառաժ, անտառ, արօտատեղի, այգեստեղի և այլն։

Շուտով մեռնում են Ներսէս կաթողիկոսը և Բաղդասար միտրօպօլիտը և այլ ևս ոչոք հոգ չէ տանում պլանի հաստատութեան մասին. սակայն որովհետև բոլոր կալուածներն արդէն քննութեամբ ճանաչված են լինում իբրև սեփականութիւն վանքերի, ուստի Կովկասեան գլխաւոր կառավարութիւնը կամենում է հաստատել պլանը և այդ մասին, ինչպէս երևում է Ղարաբաղի կօնսիստորիայի գործերից, պահանջում են 300 ռուբլի, բայց տեղական հոգևոր իշխանութիւնը խնայում է տալ այդպիսի մի գործի համար 300 ռուբլու պէս մի չնչին գումարը և մերժում է, որով և պլանը մնում է անվաւեր։ Ապագայում, ի հարկէ, կամենում են դարմանել այդ անհաղթելի սխալը, բայց արդէն շատ ուշ է լինում.... Այնու ամենայնիւ կալուածները շարունակվում են մնալ հոգևոր իշխանութեան ձեռքում, որը կառավարում է նրանց վանքերի վանահայրերի և միաբանութեան միջոցով, և թէև այդ կալուածները մեծ արդիւնք չեն բերում հոգևոր իշխանութեան համար, բայց դոնէ այդ արդիւնքներով պահպանվում էին վանքերը, նրանց մէջ հաստատված էին միաբանութիւններ, նրանք ունէին ամտեսութիւն, երկրագործական գործիք, և վանահայրերի մօտ սովորում էին գիւղացի երեխայքը հոգևորական աստիճան ընդունելու համար։ Կալուածները այդ ժամանակ ըստ մեծի մասին անվէճ էին, վանքերի տիրապետութիւնը ճանաչվում

ներով կապալով տուեց մի կապալառուին 2,400 ռուբլիով: Այնուհետև անմիջապէս նոյն հոգաբարձուների խնդիրքով վեհափառ Կաթողիկոսի և տեղական թեմական սրբազան առաջնորդի հրամանը և օրհնութիւնն ընդունելով, իսկոյն միաժամանակ սկսեց թէ նուիրատուութեան ստորագրութիւնը և թէ վերանորոգութեան գործը:

Լսելով այս իրողութիւնները, Յովհաննէս Այվազովսկի, մեր աշխարհածանօթ ծովանկարը, և անձամբ տեսնելով իր վաղուց ցանկացած գործի առաջադիմութիւնը, խոստացաւ ինքն ևս երեք հարիւր ռուբլի, սեղանի ազնիւ գորգ և հիանալի մի պատկեր իր հաղուագիւտ աշխատութիւններից նուիրել: Գուցէ յետոյ ուրիշ պէտքեր ևս չը խնայէ: Ուստի քաղաքիս հայերը թէ այս մասին և թէ իւրաքանչիւր տարի տեղիս երկսեռ դպրոցին հարիւրական ռուբլի նուիրելու համար իրանց եռախտապարտութեան շնորհակալութիւնը կը մատուցանեն պ. Այվազովսկուն: Նոյնպէս քաղաքիս բնակիչ մի լեհացի տիկին Մարիամ Շաուր, լսելով և անձամբ տեսնելով մեր վարդապետի արդիւնաւոր յատկութիւնը, իսկոյն սիրով նուիրեց եկեղեցու վերաշինութեան համար 1,100 ր.: Նոյն տիկին Շաուր նուիրեց նաև Ս. Խաչ վանքի անտառի միջով ճանապարհի շինութեան համար 1,200 ռուբլի, այն պայմանով որ հարթ և կոկ ճանապարհ շինվի չուտով ըստ ցանկութեան հայր Խորէնի, ուխտաւորների դիւրութեան համար: Այս առատաձեռն և աստուածահաճոյ հաղագիւտ բարեգործութիւնների մասին Թէոդոսիայի հայ հասարակութիւնը խորին սրտից ջերմ շնորհակալութիւնը կը մատուցանէ նոյն ազնիւ բարեգործներին:

Միւս նուիրատուների և գործակից աշխատաւորների անունները մի այլ անգամ:

***

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

—

Օգոստոսի 10-ին

Օգոստոսի 9-ին եղած սաստիկ քամուց մի այլ վտանգ էլ սպառնում էր Ղուբային: Եթէ չուտով օգնութիւն չը հասնէր և վտանգի առաջը չառնուէր, կարող էր շօշափելի վնասների ենթարկվել քաղաքը: Ղուբան կառուցված է Ղուբա գետակի հարաւային կողմում. նրա հիւսիսային կողմում գտնվում է գետակը տափարակի ստորոտում, ուր անցնում է քաղաքից ձորով տանող ճանապարհը: Ձորի գագաթում ածվում է փողոցներից մաքրվող ամբողջ աղբը և հէնց այդ պատճառով ինքն ձորը ապականված է աղբով, կատարեալ աղբանոց է դարձել: Վերոյիշեալ գիշերը, սաստիկ քամու ժամանակ, պատահմամբ սկսեցին այրվել այդ աղբի կոյտերը: Քամին սաստկանալով, այրվելն էլ սաստկացաւ և տեղական բերդաքաղաքը հասնելով ղինուորներով հաղիւ կարողացաւ հանդցնել տալ հրդեհը: Այդ հանգամանքում մեծ ծառայութիւն մատուցեց փողոցների առուակի ջուրը:

Խօսելով ջրերի մասին, ես չեմ կարող չը յիշել որ մօտ 20 տարի առաջ ղուբեցի մի հարուստ թուրք տորոնատէր, Հաջի-Ջավադ-բէկ Ալիբէկով, մեծ դումար ծախսեց և կառուցեց քաղաքի համար մի աղբիւր, որից տարիների ընթացքում Ղուբայի ժողովուրդը օգտվում էր: Ջուրը ստորերկրեայ անցքերով բերված էր հեռու տեղից, մօտ 40 վերստ հեռաւորութիւնից: Սակայն հիմա այդ աղբիւրը փչացած է և կարօտ է դարձեալ վերանորոգութեան: Եւ ահա այժմ լսում ենք որ մի ղուբայեցի պարոն, Բաղուի նօտար, Ներսէս-բէկ Սարումեան, ձեռնամուխ է լինում Ղուբայի աղբիւրի նորոգմանը իր հաշուով ու ծախսով և դրա համար արդէն թոյլտուութիւն է խնդրել հարկաւոր տեղերից: Գովելի է, ի հարկէ, պ. Սարումեանի այդ մտադրութիւնը և իր այդ գործով նա վաստակելու է մեծ երախտագիտութիւն ղուբայեցիների կողմից: Հէնց նոյն պարոնի նախաձեռնութեամբ Ղուբայում դիտաւորութիւն կայ հիմնել այժմ մի հայոց օրիորդաց դպրոց: Մեր քաղաքը արական դպրոց ունի, բայց իգական ուսումնարան չունի:

Պ. Սարումեան առաջին ինքն մեծ դումար նուիրելով, ցանկացաւ որ անշուշտ բացվի Ղուբայում օրիորդաց դպրոցի առաջին բաժանմունքը. նա խոստանում է նպաստել գործին Բաղուի հարուստների օգնութեանն էլ դիմելով: Եթէ պարոնը գլուխ բերի իր մտադրութիւնները, նա անտարակոյս բարի անուն կը թողնի Ղուբայի մէջ:

Մ. Ս.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

Օգոստոսի 1-ին

Նախընթաց նամակներիցս մինում նկարագրելով հին, համքարական միութեան մի քանի օդտակար կողմերը, ցանկութիւն էի յայտնել, թէ «Երբ պէտք է վերակազմվեն համքարութիւնները»: Ուրախալի է այժմ, երբ այդ ցանկութիւնն իրագործվում է տակաւ առ տակաւ: Առաջին անգամ կօշկակարները, մի քանի օրից յետոյ հիւսները, իսկ այս վերջին օրերը բախկալները վերակազմեցին համքարութիւնները. անտարակոյս նոցա օրինակին հետևելու են և միւսները: Ուրախալորդ չի լինի եթէ մի փոքր ընդարձակ և հանգամանօրէն խօսվի այդ միութիւնների մասին: Վերանենք բախկալները. միմիայն նոր քաղաքամասում կան հարիւր յիսուն բախկալներ. դրա մի տեսակ բաշխիչներն դեր էին կատարում քաղաքի մէջ՝ գիւղացու բերած մթերքը միմեանց ձեռքից խլելով, դինը աւելացնելով. գնում էին մի քանի ընկերներ միասին, այնուհետև այնքան չարչարում, հայհոյում և ծեծում գիւղացուն, մինչև որ կարողանան կորել և պակասացնել սակարկած գնից մի քանի ռուբլիներ, և վերջը այդ խմբակը իր մէջ ճարդախօսում և աւելացած փողը բաժանում իր մէջ, իսկ ապրանքը, որի վրա մնում է, նա էլ կրկնապատկելով գինը, վաճառում սպառողի վրա և այսպէս մի ռուբլիանոց ապրանքը ձեռնեձեռն թանգացնելով երկու և երեք ռուբլիով վաճառում: Ի հարկէ, ոչ քաղաքային վարչութիւնը և ոչ բաղարի վերակացուն այնքան ոյժ չունէին դիմադրելու այդ բարբարոսական երևոյթներին: Այժմ վերակազմվելով բախկալների համքարութիւնը ոչոքին իրաւունք չէ տրվում խլելու միմեանց ձեռքից գիւղացու բերած մթերքը, այլ տարվում է քաղաքային կշռի տակ և այնտեղ ուստաբաշին որոշում է գինը և բաժանում թաղերին: Թաղերի բախկալները հերթով վաճառում են թաղական բաժինը և արդիւնքը հաւասար բաժանում թաղի բախկալների մէջ. այս խոհեմ միջոցը համակրելի է և տայ Աստուած որ երկարատև լինի:

Երէկ բախկալների համքարութիւնը մատաղ ունէր. Վարդանանց եկեղեցու դաւթում մորթել էին երեք եզը և մի ահագին կաթսայով փլաւ պատրաստել, որը բաժանեցին աղքատների մէջ և մի մասը վեր առած բարձրացան կանաչ սարատափի վրա և Կովկասի նուիրական դափ ու զուռնայով վայելեցին համեստ կերպով համքարական ճաշը: Պատարագի ժամանակ համքարութիւնը ուխտել է հաւատարիմ և հաստատ մնալ համքարութեանը, իսկ պատարագից յետոյ օրհնել տուել քահանային իրանց նոր համքարական դրօշակը, որի մի կողմը նկարված է Ս. Գէորգ, միւս կողմը արդարութեան հրեշտակը, որ ձախ ձեռքով բռնած է հաւասարութեան կշիռը, իսկ աջ ձեռով ցոյց տալով այդ կշիռը, թէ պէտք է լինել ճշմարիտ և արդար: Պատիւ նորընտիր ուստաբաշի պ. Գրիգոր Գեղամեանցին, որը կարողացաւ ամփոփել ի միութիւն իր համքարը, և օրինակելի և խաղաղ կերպով գլուխ բերել: Կրկնում եմ. տայ Աստուած երկարատևութիւն:

Մեր բաղաքների մէջ ևս ծագել է նոյնպիսի միտք, յատուկ կիրակի օրերը սուրբ պահելու համար, բայց ինչպէս լսում ենք, ուստաբաշու պաշտօնը ոչոք յանձն չառնելով միութիւնն էլ իրագործվելու չէ, և ընդհանուր նախատինքը ոչինչ համարելով, դեռ պիտի շարունակեն մեր բաղաքները (որ ունևոր և ապահոված դասակարգն է մեր հասարակութեան մէջ) կրպակները բացանել կիրակի օրերը և արհամարհվել հասարակութիւնից: Այդ կողմից հրէաներն անգամ առաւելութիւն են կազմում, և ոչ մի հրէայ չի յանդգնի մինչև անգամ և մեծ շահով շաբաթ օրը առևտուր անելու, հակառակ դէպքում ժողովրդից և բարբիից դատապարտվում է ապաշխարութեան մի քանի ամիսներ բոբիկ մանգալու և դրամական տուգանքի յօգուտ սինագոգայի: Արհեստաւոր դասակարգը կիրակի և տօն օրերին միշտ փակում է կրպակը, իսկ առևտրականը (աննշան բացառութեամբ) ոչ կիրակի գիտէ և ոչ տօն օրը: Այս տեսակէտից համքարութիւնները կարող են սահման դնել և կարգաւորել կիրակին սուրբ պահելու խնդիրը:

Մի խայտառակ երևոյթ է մեր բախկալների այն վարմունքը, որ նոքա շատ անհոգ են վերաբերվում մրգեղէնի հետ. նոքա ամբողջ օրը արևի տակ պահելով, փչացնում և հոտեցնում են միրգը և այնուհետև, առանց խղճահարվելու, վաճառում են այդպիսի նեխածները արժան գնով աղքատների վրա: Թէպէտ հարկ էր, որ պօլիցիան և բաղարի վերակացուն ունենային պատշաճաւոր հսկողութիւն, սակայն միամտութեամբ լռում են, և այս սարսափելի չոքերին (մինչև 40—45 աստիճան Ռէօմիւրի) որպիսի վատ հետևանքներ կարող են առաջանալ: Ասենք թէ նախախնամութիւնը մեզ վրա միշտ քաղցր աչքով է մտիկ տալիս և պահպանում վարակիչ հիւանդութիւնից, բայց չէ՞ կարող պատահել որ մեր անհոգութիւններով և անմաքրասիրութեամբ բարկացնելով մեզ վրա նախախնամութեանը, շարժենք նրա ցասումը և իր պատուհասը թափել տանք մեր գլխին, այն ժամանակ ո՞ւր կը մնայ մեր հալը. ո՞վ պիտի փրկէ մեզ. քաղաքային վարչութիւնը թէ անտարբեր պօլիցիան: Մի այլ տգեղութիւն ևս— բախկալները դարսելով իրանց ապրանքը արևի տակ, բռնում են ամբողջ տրօտուարը, այնպէս որ անցուդարձ անողները ստիպված են անասունների ճանապարհով շարժվելու և քիչ չէ պատահել որ ծերեր և երեխաներ չը կարողանալով պատսպարվել սրարշաւ կառքերից և սանձարձակ հեծեալներից, ոտնատակ են լինում, նահատակվում, կամ գոնէ այլանդակվում են:

Նոյնպիսի անյարմարութիւններ են ներկայացնում և մսագործների վաճառատները, որոնք նոյնպէս բռնում են տրօտուարը և հէնց ամենաբազմամարդ փողոցներում. նոքա էլ արևի տակ բացօդեայ կախ են անում միսը, որի վրա բազմում են ճանճերը, և բոյն դնում մեղուներ և ցեցեր. և այդ ապականված միսը հարիւրված ենք գնելու և մեր ստամոքսերին մնունդ տալու: Մի անգամ խորհուրդ էի տալիս մեր մսավաճառին, որ խանութ բաց անէ և կրպակի մէջ դարսէ իր միսը. նա, արհամարհական ժպիտ արձակելով, ինձ պատասխանեց իբր թէ «անգլիացիք մինչև միսը չը հոտացնեն, չեն ուտում. միթէ մենք նրանցից խելօք մարդիկ ենք» և այլն:

Այսպիսի պայմանների մասին և հետևեալ իրողութեան վրա նոյնպէս հրաւիրում ենք ուշադրութիւն, կամենում է անմահացնել միտրօպոլիտի թողած յիշատակը, այն է հոգևոր դպրանոցը վերածել մի միջնակարգ դպրոցի և մի նոր Ներսիսեան ուսումնարան հաստատել նոյն ձևով, կանոնադրութեամբ և սկզբունքով:

Այդ նպատակով 1859 թ. հաւաքվելով առաջնորդարանում Դանիէլ վարդապետ Շահնազարեանցի նախագահութեամբ հասարակութիւնը վճռում է 1) «ճոխացուցանել հոգևոր դպրոցը ըստ կարգադրութեան Ներսիսեան ուսումնարանին որ ի Թիֆլիզ, 2) խնդրել վեհ. կաթողիկոսից հաստատել հոգաբարձութիւն: Նիւթական մասի համար հասարակութիւնը դիմում է տեղական կօնսիստօրիային, որը վիճակի ունեցած տարեկան 13,270 ռուբլի եկամտի մի մասը յատկացնում է դպրոցին մինչև ուրիշ աղբիւրների գտնելը: Մատթէոս կաթողիկոսը իր 1859 թ. դեկտեմբերի 4-ին № 284 կոնդակով հրամայում է հաստատել հոգաբարձութիւն և կատարել հոգաբարձական ընտրութիւն: Ստանալով այդ կոնդակը հասարակութիւնը ժողով է կազմում, վճռում է հոգևոր դպրանոցը հաստատել այն նպատակով, որ նրա մէջ ուսանեն ամբողջ Ղարաբաղի թեմի հոգևորականութեան և ժողովրդի զաւակները, այն է վերածել նրան թեմական դպրանոցի, և այդ նպատակով հոգաբարձութեան ընտրութեան մասնակից անել ամբողջ Ղարաբաղի թեմը ու անդամներին ընտրել ոչ միայն Շուշու, այլ և թեմի ժողովրդականներից: Այդ վճռի համեմատ կատարվում է և հոգաբարձական ընտրութիւնը. ընտրվում են հինգ անձինք-հոգաբարձուք և հինգ փոխանորդներ. հոգաբարձուներից 4-ը Շուշու ժողովականներից, այն 1) Աբրահամ բէկ Մաղաթեան, 2) Համբարձում աղայ Հախումեան, 3) Աբրահամ Խանդամիրեան, 4) Սարգիս Մաղաթեան և 5) Նուխի քաղաքի ժողովրդական Յովհաննէս բէկ Եէլիբէկեան: Այս 5 հոգին լինում են թեմական դպրանոցի առաջին հոգաբարձուները: Ժողովն այնուհետև որոշում է այն նիւթական միջոցները, որոնցով պէտք է կառավարվի դպրոցը. վճռվում է խնդրել վեհ. կաթողիկոսից յատկացնել թեմական դպրոցին հետևեալ վիճակային 14 եկամտի աղբիւրները, որոնք են.

1) Տարեկան արդիւնք կրպակաց մոմավաճառութեան բոլոր թեմին Ղարաբաղու:
2) Նուէրք ծնողաց աշակերտաց:
3) Նուէրք անձանց ստացողաց ղվկայագիր արձակման, ի հոգևոր կոչմանէ:
4) Նուէրք անձանց ստացողաց զծննդական վկայագիրս:
5) Ցուգանագրամք պահանջելիք ի յանցաւոր հոգևորականաց:
6) Բոլոր արդիւնք ուխտատեղեաց, մատրանց, մասանց և այլոց:
7) Գանձանակագրամք ժողովեալք յամենայն եկեղեցիս թեմին:
8) Նուէրք վանօրէից, ի մնացորդ դումարաց արդեանց նոցին ընդ յօդ. 115 կարգադրութեան վասն գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ:
9) Կամաւոր նուէրք ի պսակատեարց հայոց անկախ ի վիճակապատկան սոյն տեսակ արդեանց:
10) Սրբագրամ արդիւնք ի քահանայից ամի ամի ժողովելիք մի մի բուբլի:
11) Սրբագրամ արդիւնք ամի ամի ստանալիք ի հայոց ժողովրդականաց իւրաքանչիւր գերդաստանէ 20 կ. արծաթի:
12) Կամաւոր նուէրք դպրոցին:
13) Կոստէկագրամք բարձեալք ըստ ընդհանրական կանոնի տէրութեան ի ռոճկաց պաշտօնակատարաց տեղական կօնսիստօրիային:
14) Նուիրագրամք յօգուտ որբոց և այրեաց հոգևորականաց վիճակին:

Այս վճիռները կայացնելով հասարակութիւնը մի ընդարձակ խնդրագրով դիմում է Մատթէոս կաթողիկոսին հայցելով հաստատել նորընտիր հոգաբարձութիւնը և յատկացնել դպրանոցին վերյիշեալ 14 աղբիւրները: Այդ խնդրագրից մի կտոր, որ վերաբերում է կալուածներին՝ առալ ենք բերում այստեղ.....

«Զի բոլոր վանքական կալուածք, ի վիճակիս Ղարաբաղու տուեալ լիցին մնտապէս միայն ի ձեռս գլխաւոր վերատեսչի ուսումնարանի, այն է թեմական առաջնորդի և հոգաբարձուաց նորին զի այսոքիկ անձինք անկախ զկանսիստօրիական իրաւանց մարթասցին ընկալնուլ զբոլոր կալուածսն զայնոսիկ ընդ առանձին տեսչութեամբ և կառավարութեամբ իւրեանց, ժողովեսցին զամենայն արդիւնս յայնց կալուածոց և յետ հանելոյ ըստ սահմանեալ կարգի վասն բոլոր միաբանաց զնմունդ, զյաւելեալսն ի յարդեանց մուծցեն յօգուտ ուսումնարանի և ի կառավարիչն զկալուածս առաւել ևս հոգ տարցեն ի վերայ առատօրէն արդիւնաւորութեան շահուց և արագ առնելոյ զկալուածսն:»

Այս խնդրագիրը գրուած է 28 մայիսի 1860 թ:

(Կը շարունակվի)

դրութիւնն ում հարկն է։—Մսի տակսան որոշված է, ոչխարինը ֆունտը 6 կոպ., իսկ այծինը 4 կոպ.։ Բայց մեր ճարպիկ մսավաճառը իր այծի պոչը կտրելով, ոչխար է շինում և 6 կոպէկով վաճառում. դանդատաւորներ միշտ լինում են, երբեմն էլ փողոցային անկարգութիւններ, լուտանք և յիշոց պակաս չէ, սակայն մինչև այժմ այդպիսի անկարգութիւնների առաջն առնելու ոչ մի միջոց ձեռնարկված չէ և քաղաքում հազար այծերից միայն հարիւրն է այծի գնով ծախվում, իսկ իննհարիւր այծերը ոչխարանում են։

Աւ. Աս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են տպել հետևեալը։ «Կօջօրի հայոց եկեղեցու երեցփոխանի և եկեղեցու հաշուառեուների պաշտօնավարութիւնների եռամեայ ժամանակը լրանալով, նշանակված է նոր ընտրութիւն ամսիս 21-ին, կիրակի օրը, ս. պատարագից յետոյ, ուստի հրաւիրվում են Կօջօրի հայ կալուածատէր և եկեղեցի ամբողջ ժողովուրդը մասնակցելու այդ ընտրութեանը։»

—

Օգոստոսի 10-ից մեզ գրում են ԴՈՒԲԱՅԻՑ հետևեալը։ «Քանի մի օր է, որ սաստիկ չոքեր են անում. ջերմութիւնը հասնում է 38—40 աստիճանի։ Ցանքերը այս տարի սակաւ հունձ տուին. անդադար եկող անձրևները և երբեմն տեղ խիստ չոքերը փչացրին հունձերը։ Ցորենը հիմա արժէ այստեղ 75 կօպ. պուդը։ Լաւ է ծախվում միայն լուածաղիկը և շատ մարդիկ այս տարի սկսել են այդ բոյսի առևտուրը։ Չորս բուբլուց պուդը լուածաղիկը բարձրացաւ մինչև 7 բուբլի։ Ասում են որ լուածաղիկը տանում են Վիէննա և ճշմարիտ է որ մի գերմանացի եկել է այժմ Ղուբա և լուածաղիկը հազար պուդերով է առնում։ Պահանջը մեծ է. մի հայ բժիշկ միայն մի քանի հազար պուդ լուածաղիկ ունի ժողված։»

—

ԴԱՇԼԱՀԱՐԻՑ մեզ գրում են։ «Չը նայելով ֆինանսների մինիստրի տնօրէնութեան՝ գործադրել և ընդունել արծաթեայ ծակ դրամները առանց նրանց արժէքը պակասեցնելու, տեղիս առևտրականները, որոնց թւում և մի քանի հայ վաճառականներ, չարունակում են հին կարգի համեմատ պակաս գներով ընդունել այդ դրամները։ Ժողովուրդը կարողանում է իր ունեցած ծակ փողերը միմիայն տեղիս փոստատան-հեռագրատան մէջ ծախել։»

—

Շնորհակալութեամբ ստացանք վրաց յայտնի բանաստեղծ Գ. Ծերէթելիի «Հորաքոյր Ամալիի» վերնագրով վէպը, որը տպվում էր վրաց «Իվերիա» լրագրում և այժմ նոյն լրագիրը հրատարակել է առանձին գրքոյկով։ Այդ 160 երեսից բաղկացած գիրքը տպված է Թիֆլիսում, Մեսխիի տպարանում, և արժէ 20 կոպէկ։

—

Ինչպէս յայտնել էինք, ներկայ տարվայ սեպտեմբերին Թիֆլիսում կը կայանան ձիարշաւներ, որոնց պրոգրամը այժմ այստեղ առաջ ենք բերում. Հ ո ր ե ք շ ա բ թ ի, ս ե պ տ ե մ բ ե ր ի 14-ին. 1) Թիֆլիսի ձիարշաւի ընկերութեան 350 ր. մրցանակը ամեն երկիրների չորս տարեկանից ոչ պակաս ձիաների համար։ Վազելու տարածութիւնը 3 վերստ։ 2) Պետական ձիապահութեան գլխաւոր վարչութեան 500 ր. մրցանակը Կովկասում ծնած չորս տարեկան ձիաների համար. տարածութիւնը 3 վերստ։ 3) Պետական ձիապահութեան գլխաւոր վարչութեան 500 ր. մրցանակը Կովկասում ծնած 5 տարեկան ձիաների համար, տարածութիւնը 5 վերստ։ 4) Թիֆլիսի ձիարշաւի ընկերութեան մրցանակը—մի արծաթէ ընծայ, ամեն երկրի և ամեն հասակի ձիաների համար՝ տարածութիւնը 2 վերստ։ Կ ի ր ա կ ի, ս ե պ տ ե մ բ ե ր ի 18-ին. 1) Պետական ձիապահութեան գլխաւոր վարչութեան 500 ր. մրցանակ ամեն երկիրների ոչ պակաս, քան 4 տարեկան արու ձիաների և 4—5 տարեկան մատակների համար, տարածութիւնը 4 վերստ։ Թիֆլիսի ձիարշաւի ընկերութեան 200 ր. մրցանակը Կովկասում ծնած ոչ պակաս քան 4 տարեկան ձիաների համար, տարածութիւնը 2 վերստ 100 սաժ։ 3) Ժողովրդական ձիարշաւ Կովկասում ծնած ոչ պակաս քան 4 տարեկան արու ձիաների և 4—5 տարեկան մատակների համար, տարածութիւնը 4 վերստ, մրցանակը կազմվում է բաժանորդագրերից։ 4) Թիֆլիսի ձարշաւի ընկերութեան մրցանակ—մի արծաթէ ընծայ ամեն երկիրների և ամեն հասակի ձիաների համար, տարածութիւնը 2 վերստ։—Ամեն մի ձիատէր, որ կամենում է մասնակցել ձիարշաւին, պէտք է այդ յայտնի նախընթաց օրը, ներկայացնելով բաժանորդագրին 5—10 բուբլի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԻԼՀԵԼՄ ԿԱՅՍՐԻ ՃԱՌԸ

Օգոստոսի 16-ին Ֆրանկֆուրտում (Օդերի վրա) տեղի ունեցաւ ազգինց Ֆրիդրիխ-Կարլի արձանի հանդիսաւոր բացումը։ Արձանի բացմանը ներկայ էր և ինքը Գերմանիայի այժմեան կայսր Վիլհելմ, որի ցանկութեամբ և արձանի բացումը նշանակված էր օգոստոսի 16-ին, այսինքի «Պրուսիայի պատմութեան ամենափառաւոր օրերից մէկում», կամ աւելի պարզ ասած 1870 թուականի նշանաւոր յաղթութիւններից մէկի տարեդարձի օրը։ Ահա այդ հանդիսի ժամանակ, Վիլհելմ կայսրը արտասանեց մի ճառ, որը ահագին տպաւորութիւն ունեցաւ և մեծ աղմուկ հանեց Եւրոպայի բոլոր կողմերում և որը մինչև այժմ էլ զանազան բացատրութիւնների և ենթադրութիւնների նիւթ է տալիս։

Այդ ճառը, որ կայսրը արտասանեց իր քաղաքական ճանապարհորդութիւններից յետոյ, իսկապէս մեծ նշանակութիւն ունի, եթէ ենթադրենք, որ Գերմանիայի կայսրի արտասանած պաշտօնական խօսքերը Գերմանիայի ներկայ քաղաքականութեան արտայայտութիւնն են։

Յայտնելով Ֆրանկֆուրտցիներին իր շնորհակալութիւնը նոցա ցոյց տուած սիրալիր ընդունելութեան համար, Վիլհելմ կայսրը ասաց ի միջի այլոց հետևեալը. «Իմ հանգուցեալ պապը լաւ ընտրութիւն արեց, պրինց Ֆրիդրիխ-Կարլին երրորդ զօրաբաժնի գլխաւոր հրամանատար նշանակելով։ Պրինցի ամուր բնաւորութիւնը և զուտ ռազմագիտական հանճարը միջոց տուին նրան բրանդենբուրգցիներից այնպիսի զինուորներ պատրաստելու, որոնք իրանց քաջութիւնը ցոյց տուին շատ նշանաւոր ճակատամարտերի ժամանակ։ Դրա համար հարկաւոր էր մեծ խստութեամբ վարժեցնել զինուորներին, և որը Ֆրիդրիխ-Կարլի ամենանշանաւոր ծառայութիւնն է։ Խմում եմ Ֆրանկֆուրտ քաղաքի և երրորդ զօրաբաժնի կենացը։ Այժմ ծանր ժամանակներ են վրա հասել։ Բայց և այնպէս, պարոններ, ամենքդ էլ կարող էք հաւատացած լինել, որ Հոհենցօլէրնի տանը պատկանողներից և ոչ մէկը յետ չի դարձնի և ոչ մի քար այն բոլորից, ինչ որ ձեռք է բերվել։ Մենք ամենքս այդ լաւ գիտենք։ Մենք աւելի լաւ կը համարենք զոհել գերմանական ամբողջ զօրքը, մենք աւելի լաւ կը համարենք զոհել մինչև անգամ 42 միլիոն գերմանական ազգը, քան թէ թոյլ տալ որ մեզանից խլեն մեր ձեռք բերած հողերի մի ամենափոքր կտորն անգամ։ Խմում եմ Ֆրանկֆուրտի և երրորդ զօրաբաժնի կենացը»։

Ահա այդ նշանաւոր և վերին աստիճանի պարզ և համարձակ խօսքերն են, որոնք ահագին աղմուկ են դցել եւրոպական դիպլօմատիական շրջաններում։ Լուր կայ, որ այդ միջոցին Վիլհելմ կայսրը խօսեց և իր հանդուցեալ հօր Ֆրիդրիխի առիթով։ Ինչպէս յայտնի է, դեռ Ֆրիդրիխի կենդանութեան ժամանակ, լուրեր սկսեցին պատել, որ իբր թէ այդ յեղափոխական կայսրը մտադիր է յետ դարձնել Էլզաս-Լոթարինգիան Ֆրանսիային, ազգերի խաղաղութեան գործը հաստատ հիմքերի վրա դնելու համար։ Այժմ Վիլհելմ կայսրը խօսելով այդ լուրերի առիթով՝ նկատել է, որ ինքը պատրաստ է «ամեն բան անելու, որպէս զի ջրէ իր հօր համար նախատական այդ կարծիքը։»

Կասկած չը կայ, որ Վիլհելմի այդ խօսքերը գլխաւորապէս ուղղված են Ֆրանսիայի հասցէին, և մտքերի այն յուզման ժամանակ, երբ իսկապէս պետութիւնների յարաբերութիւնները լարվում են, և երբ միւս կողմից Գերմանիան չարունակում է շատացնել իր դաշնակիցների թիւը, Վիլհելմի արտասանած այդ խօսքերը՝ «թէ մենք աւելի լաւ ենք համարում զոհել ամբողջ զօրքը և ամբողջ 42 միլիոն ժողովուրդը, քան թէ յետ տալ նոյն իսկ մի քար մեր ձեռք բերած երկիրներից, անկարող են առանց ուշադրութեան մնալ և աւելի չը բորբոքել յուզված մտքերը...

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԵՒ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Թիւրքիան չարունակում է փոխառութիւններ անել. Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են հետևեալը. «Օսմ. կայս. Պանքայի անօրէն պ. Տըվօ այս օրերս տեսակցութիւն ունեցաւ Մեծ-Եպարքոսին և Ելմտական նախարարին հետ, նոյն երեկոյին հեռագիր մ՝ուղղեց ի Բարիզ, ծանուցանելով իւր ներկայացուցած դրամատան վարչութեան թէ վերջնապէս ինչ պայմանաց վրայ համաձայնութիւն գոյացած է և պայմանագիրն ստորագրելու արտօնութիւն խնդրելով։ Փոխառութեան ճիշդ գումարն է 1,340,000 անգլ. ոսկի, այսինքն 1,474,000 օսմ. ոսկի, տոկոսի դինը 100-ին 5 պիտի լինի և գլխավճարն 100-ին 2։ Հետնաբար տարուէ տարի պիտի հատուցուի 93,800 անգլ. ոսկի կամ 103, 180 օսմ. ոսկի։ Այս գումարը կարենալ վճարելու համար, կայս. կառավարութիւնը կառաջարկէ Հանրային Պարտուց վարչութեան թողուլ Թուրքիոյ ձկնարանաց արտօնագրերն և մետաքսեղինաց հասոյթը, որ սորդութեան արտօնագրի և թէմզէքիի հասոյթներն և դրոշմի նոր օրինաց գործադրութեամբ աւելնալիք գումարն։ Ասոնց ամբողջին տարեկան գումարը կենթադրուի 107,800 օսմ. ոսկի։ Որպէս զի հաշուական խանգարում մը չը պատահի, կառավարութիւնը կը յօժարի յանձնել նաև Այտընի նահանգին ոչխարի տրոց միջոցաւ վճարելի փոխանակագրեր, 10,000 ոսկւոյ։ Այս կերպով Հանրային Պարտուց վարչութեան ձեռքը պիտի գտնուին ի նորոյ թողեալ հասոյթներ, տարեկան մինչև 117,800 ոսկւոյ հասնող, որք 103,180 ոսկւոյ տարեվճար մը և զանձման ծախքերը պիտի փոխարինեն։»

Քարբերդից, յուլիսի 17-ից գրում են «Արևելք» լրագրին հետևեալ դէպքի մասին։ «Ամսոյս 5-ին, երեքշաբթի օր, ութ տարեկան հայ տղեկ մը շուկայէ տուն դառնալուն կէս օրին, պատրուակով իմն ներս տուն կը քաշուի հասակն առած թուրք երիտասարդէ մը, որմէ անկուր վայրագութեամբ լկտուելէ յետոյ, կիսամեռ վիճակաւ դուրս կը ձգուի։ Անցորդին մէկն ի պահում մանկան տարաձայն վայիւնը լսելով ու զետնի վրայ գալարիլը տեսնելով կը հարցնէ և կը հասկնայ իրողութիւնն ու քաղաքապետութեան լուր հասցնելով անմիջապէս, տղեկի ցուցումներէն կիմանան ոճրագործն, զոր իսկոյն ձերբակալելով՝ ոստիկանք կառաջնորդեն ի Մէզիրէ ի հարց փորձ։ Դէպքն ահռելի տպաւորութիւն ըրաւ և քրիստոնէից չափ ցաւ ցոյց տուին և թուրք հայրենակիցներ։ Օրը չերեկոյացած մանուն իր մօր դիրկը՝ Վ.սեմ. կուսակալի առջևն հանուելով նոյն ջախջախուած դրութեան մէջ, բժշկաց վկայութեամբ կը հաստատէ իրողութիւնն իր պարագայներով, որոյ վերայ չարագործն ի բանտ կը ղրկուի մինչև որ հետզհետէ օրինական ստուգութիւններ կատարվին։»

Կ. Պոլսում Վահան վարդապետ Մինասեան աղգանունով հոգևորականը ձեռնարկել է «Սոխակ» անունով մի հանդիսի հրատարակութեան։

Խառն ժողովը իր վերջին նիստի մէջ արել է հետևեալ կարգադրութիւնները. «Տիգրանակերտի առաջնորդ կարգից Աչէաթեան Գեր. Գրիգորիս եպիսկոպոսն, որ նախորդ որոշմամբ մը նոյն վիճակին պատրիարքական փոխանորդ անուանուած բայց հրաժարած էր։ Ընդունեց Մշոյ առաջնորդութեան համար Կրօնական Ժողովոյ կողմէ պատրաստեալ ընտրելեաց ցանկն որ կը պարունակէ Գեր. Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեանի, Գեր. Վահրամ եպիսկոպոս Մանկունիի և Արժ. Ներսէս վարդապետ Խաչանանեանի անունները։ Եղդաստի առաջնորդական տեղապահ կարգից Սոսդ միաբաններէն Գեր. Աբրահամ եպիսկոպոսն որ մէկ քանի օրէն պիտի մեկնի։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բէլգրադից լրագիրներին հեռագրում են, օգոստոսի 12-ից, որ Միլան Թագաւորի ծննդեան օրվայ առիթով ներումն շնորհվեցաւ 500-ից աւելի, առաւելապէս քաղաքական յանցաւորներին։

—Կ. Պոլսից «Times» լրագրին գրում են հաստատ աղբիւրից ստացված տեղեկութիւնների հիման վրա, որ սուլթան Աբդուլ-Համիդի կողմից Վիլհելմ II կայսրի գահակալութիւնը շնորհաւորելու համար Բերլին ուղարկված Մունիր-փաշան յանձնարարութիւն ունէր նոյնպէս սուլթանի կողմից յոյս յայտնել, որ Գերմանիան կը շարունակէ պաշտպանել Թիւրքիային։ Մունիր-փաշայի հետ խօսակցող կոմս Հէրբէրտ Բիսմարկ կատարելապէս յուսահատեցրեց վերջինին իր պատասխաններով, ցոյց տալով թէ կեանքը ապահոված չէ Թիւրքիայում, թէ վարչական կազմակերպութիւնը քայքայված է, որի պատճառով պաշտօնեաները և զինուորները ռոճիկ չեն ստանում և այլն։ Վերջապէս, աւելացրեց կոմս Հէրբէրտ Բիսմարկ, դրութիւնը այնպէս է, որ Գերմանիան ոչ միայն չէ կարող խոստանալ իր հովանաւորութիւնը Թիւրքիային, բայց մինչև անգամ չէ կարող ընդդիմանալ Թիւրքաց հողը մաս մաս անելուն։ Այդ խօսակցութիւնը այնպիսի զօրեղ տպաւորութիւն գործեց սուլթանի վրա, որ նա խորհրդակցում էր Թիւրքիայի պետական նշանաւոր գործիչներից շատերի հետ, ի միջի այլոց և նախկին վիզիր Սաիդ-փաշայի հետ։ Ահա այդ ժամանակից սկսեցին խօսել մինիստրութեան փոփոխութեան և Սայիդ-փաշային մեծ վիզիր նշանակելու մասին։

—«Corresp. d l'Est» լրագրին Սոֆիայից հաղորդում են, թէ որովհետև Բօգոնեան լեռներից իջած աւազակները յարձակվում և կողոպտում են շրջակայ գիւղերը, այդ պատճառով մինիստրների խորհուրդը վճռեց գործադրել - աւազակութեան վերաբերեալ օրէնքը, որը ուրիշ պետութիւններում պաշարման դրութեան մասին եղած օրէնքների ոյժ ունի։ Բացի դրանից վճռված է ոչ մէկի համար փրկանք չը տալ։

—Նոյն լրագրին Կ. Պոլսից ստացած տեղեկութիւնների համեմատ, մինիստրական ճգնաժամը չարունակվում է։ Սաիդ-փաշան հրաժարվում է մեծ վիզիրի կոչումից, պատճառ բերելով իր հիւանդութիւնը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շուտով Երուսաղէմ կարելի կը լինի գնալ երկաթուղով, որը եկող աշնանը, վերջապէս, վերջացված է անցկացնել Եաֆֆայից։ Այդ հանգամանքը, ի հարկէ, մեծ ազդեցութիւն կունենայ ուխտաւորների թիւի վրա, որոնց համար շատ հեշտ կը լինի գնալ սուրբ տեղերը։ Բացի երկաթուղուց Երուսաղէմը ջրի մեծ պակասութիւն է ըզգում, և եթէ սուրբ քաղաքը ջուր ունենար, շատ շուտով կը ծաղկէր Երուսաղէմը։ Երկաթուղու կառուցմանը մասնակցում են հայ վաճառականները։

* * *

«Times» լրագիրը հաղորդում է Ֆուչուում (Չինաստանում) նորերումս պատահած հետևեալ հետաքրքիր անցքի մասին։ Այդ քաղաքի տաճարներից մէկում դետեղված են կուռքեր, որոնց օգնութեանը մինչև այժմ դիմում էին բոլոր նրանք, որոնք կամենում էին վրէժ առնել իրանց թշնամիներից։ Քաղաքի զինուորական նահանգապետի յանկարծական մահը ժողովուրդը վերագրեց այդ կուռքերին, որի մասին հաղորդվեցաւ փոխարքային։ Վերջինս հրամայեց կալանաւորել և պատժել յանցաւորներին։ Վարչութիւնը գնաց տաճարը և կալանաւորեց 15 փայտէ կուռքեր, որոնցից իւրաքանչիւրը 5 ֆուտ բարձրութիւն ունէր։ Նախ քան նրանց դատարան բերելը, հանեցին նրանց աչքերը, որպէս զի կուռքերը չը կարողանան տեսնել իրանց դատաւորներին և որ և է մէջաս չը հասցնեն։ Դատավճիռը կարդաց փոխարքան, հրամայելով գլխատել կուռքերին և ջուրը գցել նրանց, իսկ տաճարը մշտապէս փակել, որպէս զի նոյն տեսակի ուրիշ կուռքերը չը կարողանան խանգարել Ֆուչուի հանգստութիւնը։

* * *

Անգլիացի բժշկապետ Ռիչարդսոն «Longmans Magasine» ամսագրում առաջարկում է իւրաքանչիւր մարդու կեանքի երկարատևութիւնն իմանալու հետևեալ միջոցը։ Պէտք է միայն հաշուել թէ որքան են ապրել միասին հայրը, մայրը, երկու պապերը և երկու մեծ մայրերը, և ստացած դումարը բաժանել 6-ի վրա։ Բաժանումից յետոյ ստացված թիւը կը ցոյց տայ, թէ դուք որքան պէտք է ապրէք։ Ռիչարդսոն իր միտքը ապացուցանելու համար օգուտ էր քաղում կեանքը ապահովացնող ընկերութիւնների մէջ ժողոված տեղեկութիւններից։

* * *

Բերլինում գոյութիւն ունի ճաղատ մարդկանց կլուբ։ Դա, ի հարկէ, մի շատ տարօրինակ կլուբ է։ Դրանից աւելի հետաքրքիր է Վարշավայում նոր բացվող կլուբը լուռ մարդկանց համար։ Այդ կլուբի անդամները, դատարկաբանութիւն չը սիրելով, դիտաւորութիւն ունեն շաբաթը մի անգամ հաւաքվել կլուբի չինութեան մէջ, նստել միասին և.... լռել։ Անպայման լռելը առաջին պայմանն է կլուբ այցելողների համար. ամբողջ երեկոյի ընթացքում 10 խօսքից աւելի արտասանողը պէտք է 50 կոպէկ տուգանք վճարէ իւրաքանչիւր աւելորդ խօսքի համար։

„ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 17 օգոստոսի։ «Կայսերական Ուղեցոյցի» մէջ յայտնված է, որ Բէնինգսէն նըշանակվում է Հաննովէր նահանգի գլխաւոր-նախագահ։

ՓԱՐԻԶ, 17 օգոստոսի։ Գենեռալ Բուլանժէ երկուշաբթի երեկոյեան ճանապարհ ընկաւ դէպի Շվէդիա, ուր կը մնայ մի ամսվայ չափ։

ՀՌՕՄ, 17 օգոստոսի։ Վիլհէլմ կայսրը պապին մի նամակ գրեց, որի մէջ բացատրում է իր Հռոմ գնալը պապին Վատիկանում ողջունելու թախանձագին ցանկութեամբ։ Այդ այցելութեան մանրամասնութիւնները խիստ գաղտնի են պահվում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 օգոստոսի։ «Гражданинъ» լրագիրը հաղորդում է, որ չուտով կը քննվի կանանց և տղամարդկանց ժառանգական իրաւունքները հաւասարեցնելու օրինագիծ։ Զինուորական մինիստրը ճանապարհ է ընկնում Ելիսավէտգրադ օգոստոսի 24-ի զօրախաղերին ներկայ լինելու համար։

ՄԻՒՆԻԷՆ, 18 օգոստոսի։ Աւստրիական կայսրը վաղը Տէգէրնզէից գնում է Գմունդէն, իսկ աւստրիական կայսրուհին նոյն տեղը ճանապարհ կընկնի ուրբաթ առաւօտեան։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է որ և է մի տեղ Հայոց դպրոցներում ուսուցչութեան պաշտօն ունենալ։ Կարող է աւանդել՝ Հայոց լեզու, ռուսաց լեզու, ռուսաց աշխարհագրութիւն և պատմութիւն, նոյնպէս բնագիտութիւն։ Շաբաթական 26 դասին 600 ռուբլի վարձատրութիւն։ Պատրաստ է գնալ ամեն տեղ։

Հասցէն. КАРСЪ, Ерванду Васильевичу Казаріанцу. 1—5

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՈՒՄ նորեկների խնդիրների ընդունելութիւնը և քննութիւնները կը սկսվեն սեպտեմբերի 1-ից մինչև 10-ը։ 1—3

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ երկսեռ ուսումնարանների համար հարկաւոր է ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ 21 դասով ռուսաց լեզուից։ Ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել Թիֆլիս պ. Լևոն Թաթևոսեանցին, առաւօտեան 8—10 ժամը այս հասցէով. Тифлисъ, Авчальская ул. д, № 57. 1—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ լաւ գիտէ հայկական ձայնագրութիւն և ունի աջող ձայն, կամենում է ձայնագրութեան դասեր ունենալ գաւառական ուսումնարաններից մինում։ Պայմաններն են շաբաթական 12 դասի համար, ամսական 300 ր., իսկ եկեղեցու մէջ տիրացուութեան համար 100 ր., բացի սրանից մի սենեակ և վառելիք։ Ցանկացողք կարող են դիմել Եղնիկ քահանայ Երզնկեանցին Թիֆլիսում։ 1—3

Խիղեկէլի գրավաճառանոցում ծախվում է Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձութեան խորհրդից թոյլատրութիւն տուացած Ամիրաղեանի և Տէր-Գաբրիէլեանցի կազմած «НОВАЯ КНИЖКА ДЛЯ ОБУЧЕНІЯ РУССКОМУ ЯЗЫКУ въ армянскихъ начальныхъ школахъ г. I и II» դասագիրքը։ 1—3

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ երկդասեան երկսեռ ուսումնարանի համար հարկաւոր են՝ մի ուսուցիչ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ, մի ուսուցիչ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ և ձայնագրութեան և մի ուսուցչուհի ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ։

Պայմանների մասին դիմել հոգաբարձութեանը։ 3—5 (Շ. Ե.)

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ հայոց օրիորդաց ուսումնարանի համար հարկաւոր է մի ուսուցչուհի ռուսաց լեզուի (շաբաթական 20 դաս). պայմանների մասին մանրամասնութիւններ կարելի է իմանալ Ն. Եաղուբեանից, Միքայէլեան փողոց, № 129 (երեկ. 5—7 ժ.) 2—3

ШИРВАНЗАДѢ

„ԱՐԱՄԲԻՆ“

ՎԷՊ։

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է Թիֆլիսում. Կենտրոնական դրավաճառանոցում, իշխ. Բէհրութեանի և Աբգ. Յովհաննիսեանի գործակալութեան մէջ և հեղինակի մոտ. Тифлисъ, Редакція «Арцаганкъ», Ширванзадэ.

Գինն է 75 կոպ.

Ճանապարհածախսով 1 ր.

3—10

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՐԳՐՈՑՆԵՐՈՒՄ աշակերտ—աշակերտուհիների պարապմունքի տեղ կայ 80. խնդիրներ ընդունվում են հոգաբարձու պ. Հ. Քոչարեանցի մոտ, Հախումեանցի տան տակ, պարապմունքի դիմաց։ Ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ից։ 3—3

ԿԱՐՍԻ հայոց երկդասեան հոգևոր երկսեռ ուսումնարանների համար հարկաւոր է մի տեսուչ, որը մի և նոյն ժամանակ կունենայ շաբաթական 16—18 դաս ռուսաց լեզուից և առարկաներից։ Ցանկացողք թող շտապեն առաջարկել իրանց պայմանները նոյն ուսումնարանաց հոգաբարձութեանը։ 3—3

Մամուլի տակից լոյս տեսաւ
„Զրոյցներ“ բնական պատմութիւնից
Առաջին մաս.
Ս. Փիլոեանի

Գինն է 40 կոպ. Ծախում է Թիֆլիսում կենտրոնական և „Աղբիւրի“ գրավաճառանոցներում. իսկ օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Ново-Баязетъ. Учителю Саркису Филоянъ. 2—3

Societa Generale italiana di Navigazione.

117 ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԵԾ ՇՈԳԵՆԱՒԵՐ ՈՒՆԵՑՈՂ

ԻՏԱԼԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Կանոնաւոր երթևեկութիւն Բաթումի և Եւրոպայի, Աֆրիկայի, Ասիայի ու Ամերիկայի բոլոր դէպաւոր նաւահանդիսաների մէջ։ Շոգենաւերը Բաթումից դուրս են գալիս կանոնաւորապէս ամեն շաբաթ։

1,500 տոննա ունեցող շոգենաւերը Բաթումից դուրս են գալիս ամեն երեքշաբթի օր դէպի Անատոլիայի բոլոր գծերը և կ. Պոլիս։

Բոլոր տեղեկութիւնների մասին (թէ ճանապարհորդների և թէ ապրանքների մասին) դիմել ընկերութեան գործակալ Ի. Է. ԶԵՐՐՈՒՏԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ—Գօլովինսկի պրոսպ. № 34 և ԲԱԹՈՒՄՈՒՄ—Իշխ. Գուրիէլիի տանը։

17—40

ԿԱՈՒՉՈՒԿԵԱՆ ՕԾԱՆԵԼԻՔ ՃԱՀՃԱՑԻՆ ԿՕՇԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳՈՐԾԱՐԱՆԻ

Ր. ԿԷՕԼԷՐԻ ԵՒ ԸՆԿ. ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Կաշին շատ փափկացնող է և ամենևին խոնաւութիւնը չէ անցկացնում։
Էժան է դրա նման բոլոր օծանելիքներից։
Ծախվում է գաւառներում բոլոր նշանաւոր առևտրականների մոտ. Մոսկվայում Ր. ԿԷՕԼԷՐԻ և ԸՆԿ. մոտ, Նիկոլսկայա փողոցի վրա։

№ 3. Ц. К. О. (1—3)

ԿԷՕԼԷՐԵԱՆ ՆՈՐ ՄԱԳԵԱՆ ԿՐԱԿՆԵՐ

մետալական փամփուշտներում, սաստիկ պայծառ և տպաւորութիւն անող են հրավառութեան համար սենեակներում և այգիներում, եկեղեցական աշտարակները լուսաւորելու համար և հանդիսաւոր գնացքների համար։ Այրվում են առանց ծխի և հոտի և անվտանգ են փոստով ուղարկելու համար։
Ծախվում է գաւառներում բոլոր նշանաւոր առևտրականների մոտ. Մոսկվայում—Ր. ԿԷՕԼԷՐԻ և ԸՆԿ. մոտ, Նիկոլսկայա փողոցի վրա։

№ 3. Ц. К. О. (1—3)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Հինգշաբթի, սեպտեմբերի 1-ին, ԱՆԱՏՕԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԵԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմշօղլուի տան, Նարևրէժնայա, և Թիֆլիսում Նախկին Արծրունի գալերէուում, № 103. 1—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 26 օգոստոսի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ NIÉMEN (ՆԻԷՄԷՆ) նաւապետ SEIPIONI (ՍԷԻՊԻՕՆԻ) մտնելով Կ. Պոլիս, Զմիռնիա և Սիրա։

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒՐԵԱՆՑ։ 1—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

ԲԱԳՐԱՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑԻ

ՏԵՂԱՓՈԽՎԵՑԱԻ ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ

Գանձակայա փողոցի դիմաց, Սաղովայա փողոցի վրա տ. № 38
Գիշերօթիկների, կիսագիշերօթիկների և երթևեկների քննութիւնները և ընդունելութիւնը կը սկսվեն օգոստոսի 20-ից, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ից։ 1—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնաւորական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդվող առարկայք սոքա են՝ 1) Առևտրական գնահատութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն, և 7) գեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 25-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Լաբօրատորնայա փողոցի վրա, № 11։ Իսկ օգոստոսի 20-ից Աղէքսանդր Փրիդոնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նադորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց, ուր որ անցնելու են կուրսերը։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՁՐԻԱՊԷՍ եղբ. Ծովհաննէսեանների բանկային դրասենակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

7—20 (Ն. Շ.)

Дозволено цензурою, Тифлисъ 19 Августа 1888 г.

Типографія Канцеляріи Главноначч. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.